

Հավելված
ՀՀ հաշվեքննիչ պալատի
2025թ. ապրիլի 29-ի թիվ 32-Ս որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ



ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՏԱՐԵԿԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ	3
2. ԱՄՓՈՓԱԳԻՐ	5
3. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ	7
4. ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ	9
5. ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	10
6. ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄԸ	17
7. ՀԵՏՀՄԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ	18
8. ՀԱՎԵԼՎԱԾ ԵՎ ԱՅԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ	19
9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	21

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Հաշվեքննության հիմքը¹	Հաշվեքննիչ պալատի 2024 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 148-Ա որոշում:		
Հաշվեքննության օբյեկտը	Հայաստանի	Հանրապետության	առողջապահության նախարարություն:
Հաշվեքննության առարկան	2024 թվականի պետական բյուջեի տարեկան մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:		
Հաշվեքննության առարկայի չափանիշները	«ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք, «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենք, «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք, ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի «ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» № 2323-Ն որոշում, ՀՀ կառավարության 2019 թվականի հունիսի 1-ի «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի № 699-Լ և № 727-Լ որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» № 659-Լ որոշում, ՀՀ ֆինանսների նախարարի 2019թ. մարտի 13-ի № 254-Ն հրաման և այլ իրավական ակտեր:		
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2024 թվականի հունվարի 1-ից 2024 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:		
Հաշվեքննության կատարման ժամկետը	2025 թվականի հունվարի 13-ից 2025 թվականի ապրիլի 30-ը ներառյալ:		

¹ ՈՀաշվեքննիչ պալատի մասին՝ ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն սույն Ընթացիկ եզրակացությունն օգտագործվում է ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացությունը կազմելու համար:

Հաշվեքննության մեթոդաբանությունը²

Հաշվեքննությունն իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննությունների մեթոդաբանությունների համաձայն:

Հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային ստորաբաժանում

Հաշվեքննությունն իրականացվել է Հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության վարչության կողմից:

Աշխատանքները համակարգել է Հաշվեքննիչ պալատի անդամ Գագիկ Բարսեղյանը:

² «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 58-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Հաշվեքննիչ պալատի հաշվեքննությունների մեթոդաբանությունները հիմնված են Բարձրագույն հաշվեքննիչ մարմինների միջազգային կազմակերպության (INTOSAI) սկզբունքների, ստանդարտների ու ուղեցույցների վրա:

2. ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀՀ առողջապահության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) 2024 թվականի պետական բյուջեի տարեկան մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեության հաշվեքննությամբ արձանագրված ուշագրավ փաստերն են.

- Նախարարությունում, հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանի ավարտի դրությամբ, դեռևս ներդրված չէ Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտի³ (այսուհետ՝ Ստանդարտ) պահանջներին և հաշվային պլանին⁴ համապատասխան հաշվապահական հաշվառում վարելու հնարավորությունն ընձեռող համակարգչային ծրագիրը՝ հաշվապահական հաշվառման ավտոմատացված համակարգը,
- Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության ու սպասարկման ծառայությունները շարունակել են ձեռք բերվել գներով, որոնց ձևավորման համար չեն պահպանվել սահմանված իրավական պահանջները: Նախարարության կողմից բժշկական ծառայությունների դիմաց վճարումները կատարվել են գներով, որոնք չեն ձևավորվել բժշկատնտեսագիտական ուղեցույցներով, միջին շուկայական գների ուսումնասիրությամբ, ակտուարական հաշվարկներով և/կամ սահմանված որևէ այլ եղանակով հիմնավորող մեթոդաբանությամբ,
- Նախարարությունը հաշվետու տարում իր պաշտոնական կայքէջում օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում չի հրապարակել պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող առևտրային կազմակերպությունների հաշվետու տարվան նախորդող՝ 2023 թվականի տարեկան ֆինանսատնտեսական հաշվետվությունները, դրանով իսկ չապահովելով տվյալ բնագավառում օրենսդրությամբ սահմանված նպատակի՝ ֆինանսական հաշվետվողականության բարելավման իրագործումը⁵,
- Հաշվետու ժամանակաշրջանում Նախարարությունը դեղամիջոցների ձեռքբերման 4 պայմանագիր է կնքել ոչ ռեզիդենտ կազմակերպության հետ՝ ընդհանուր գինը 2,584,029.6 ԱՄՆ դոլար, որի դիմաց վճարումը կազմել է 902,140,057.6 դրամ: Պայմանագրերի համաձայն գինը ներառում է Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը: Նախարարությունը նշված պայմանագրերի

³ Հաստատված է ՀՀ ֆինանսների նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 24-ի № 725-Ն հրամանով:

⁴ Հաստատված է ՀՀ ֆինանսների նախարարի 2015 թվականի ապրիլի 9-ի № 207-Ն հրամանով:

⁵ Սահմանված է ՀՀ կառավարության 2011 թվականի հուլիսի 28-ի № 1058-Ն որոշմամբ:

շրջանակներում հաշվետու տարում փաստացի մատակարարված դեղամիջոցների պայմանագրային գումարները Վաճառողին վճարելուց բացի ՀՀ պետական բյուջե է վճարել նաև այդ դեղամիջոցների մաքսատուրքերն ու մաքսավճարները: Արդյունքում Վաճառողին պայմանագրով սահմանված գումարից ավելի է վճարվել՝ 26,792.9 հազ. դրամ:

3 ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

2024 թվականի ընթացքում հաշվեքննության համար էական նշանակություն ունեցող հարցերի՝ փաստացի ծախսերի մասով անալիտիկ տվյալների (ըստ շահառուների (նշելով անձի իդենտիֆիկացիոն համարը, ծառայության մատուցման սկիզբ, ավարտ), կազմակերպությունների, ծառայությունների ծածկույթի (քառանիշ կոդ) և ծառայության անվանման/տեսակի (յոթանիշ կոդ)) վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվել է ոչ ամբողջական, թերի՝ բժշկական գաղտնիք հանդիսանալու պատճառաբանությամբ: Ըստ այդմ, սահմանափակվել է ծառայությունների ձեռքբերման պայմանագրերի շրջանակում պետական բյուջեից կատարված վճարումների օրինականության՝ հաշվետվությունների արժանահավատության վերաբերյալ կարծիքի ձևավորման հնարավորությունը: Մասնավորապես, հնարավոր չի եղել գնահատել թե արդյոք առկա՞ են համընկնումներ պետական բյուջեից միննույն ծառայության դիմաց, նույն շահառուին, նույն ժամանակահատվածում՝ վճարովի հիմունքներով մատուցված, ՀՀ-ում չգտնվող անձանց, զինծառայողներին և նրանց հավասարեցված անձանց դեպքերում կատարված վճարումների հետ: Վճարովի սկզբունքով իրականացված ծառայությունների մասով նույն տեղեկատվությունն էլեկտրոնային առողջապահության «ԱՐՄԵԴ» համակարգում ոչ բոլոր կազմակերպությունների կողմից է ներկայացված:

Միաժամանակ, 2024 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման հաշվեքննության շրջանակում Նախարարությունից ստացված այլ տեղեկատվությունը բավարար է եղել հաշվեքննությունն իրականացնելու համար:

Հաշվեքննության առարկան կարգավորող իրավական ակտերով և քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակում կնքված պայմանագրերով սահմանված չափանիշների չպահպանման առանձին դեպքերում հաշվեքննությամբ արձանագրված անհամապատասխանությունները հանգեցրել են փաստացի ծախսերի և կրեդիտորական պարտքերի ցուցանիշների համապատասխանաբար՝ 589,202.22 և 562,409.32 հազ. դրամի չափով խեղաթյուրումների⁷:

⁶ Հաշվեքննությունը նպատակ է հետապնդել հաշվեքննության առարկային վերաբերելի տեղեկատվության ներկայացուցչական ընտրանքով (100%-ից փոքր) ձեռք բերել բավարար, համապատասխան հաշվեքննության ապացույցներ, որոնց կուտակմամբ ձևավորվելու է պետական բյուջեի տարեկան կատարման վերաբերյալ եզրակացությունը՝ ներառյալ հաշվեքննության կարծիքը, որով պետք է արտահայտվի ողջամիտ (ոչ բացարձակ) հավաստիացում առ այն, թե պետական բյուջեի կատարման վերաբերյալ տարեկան հաշվետվությունը, բոլոր էական առումներով, ներկայացնում է արդյոք ՀՀ պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեության ճշմարիտ ու իրական պատկերը:

⁷ Տվյալ դեպքում արձանագրված՝ բյուջեի կատարման հաշվետվություններում փաստացի (իրական) ծախսերի և կրեդիտորական պարտքերի ցուցանիշների խեղաթյուրումները, օրենսդրության համաձայն, ազդեցություն չեն կարող ունենալ Հաշվեքննիչ պալատի կողմից պետական բյուջեի կատարման վերաբերյալ տրվող կարծիքի վրա. «Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքով (24-րդ հոդված) Հաշվեքննիչ պալատը պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացությունը, ներառյալ կարծիքը, ներկայացնում է կառավարության կողմից ներկայացվող պետական բյուջեի կատարման վերաբերյալ:

Դեղամիջոցների գնման 4 պայմանագրով սահմանված գներից 26,792.9 հազ. դրամի չափով կատարված ավելի վճարումը հանգեցրել է բյուջեի կատարման հաշվետվությունում դրամարկղային ծախսերի ցուցանիշի նույն գումարի չափով խեղաթյուրման:

Արձանագրված անհամապատասխանությունների և խեղաթյուրման մանրամասն նկարագիրը, դրանց վերաբերյալ Նախարարության դիրքորոշումը, ինչպես նաև հաշվեքննողների մեկնաբանությունները ներկայացված են սույն ընթացիկ եզրակացության «Անհամապատասխանություններ» և «Խեղաթյուրում» բաժիններում:

«Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետի համաձայն պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը ներառում է՝ «պետական բյուջեի եկամուտների, ծախսերի և դեֆիցիտի (հավելուրդի) հիմնավորվածությունը, դրանց համեմատական վերլուծությունը հաշվետու տարվան նախորդող տարվա փաստացի, ինչպես նաև հաշվետու տարվա համար հաստատված և փաստացի կատարված համապատասխան ցուցանիշների նկատմամբ»:

4. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Նախարարությանը՝ որպես ծրագրերի կատարողի, 2024 թվականի պետական բյուջեի պլանով նախատեսվել է 145,747,679.50 հազ. դրամ, ճշտված պլանը կազմել է 154,444,697.54 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 150,731,269.45 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախսը)՝ 151,185,178.42 հազ. դրամ⁸, փաստացի ծախսը՝ 148,880,924.1 հազ. դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում ճշտված պլանի նկատմամբ դրամարկղային ծախսը կազմել է 97.89%, ըստ ծրագրերի ցուցանիշները ներկայացված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Նախարարության 2024 թվականի պետական բյուջեի ցուցանիշները

(հազար դրամ)

	ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Տարեկան պլան	Տարեկան ճշտված պլան	Փաստ	Փաստացի ծախս
	ԸՆԴԱՄԵՆԸ	145,747,679.5	154,444,697.5	151,185,178.4	148,880,924.1
1003	Հանրային առողջության պահպանում	7,334,825.6	7,334,825.6	6,985,673.0	6,182,611.4
1015	Սոցիալական փաթեթների ապահովում	-	27,000.0	21,279.0	21,279.0
1053	Առողջապահության համակարգի արդիականացման և արդյունավետության բարձրացման ծրագիր	2,490,291.2	2,961,491.2	2,311,361.4	2,358,135.3
1099	Առողջության առաջնային պահպանում	31,629,593.5	31,481,593.5	31,261,938.1	31,239,050.5
1110	Այլընտրանքային աշխատանքային ծառայություն	6,480.0	2,340.0	1,860.0	1,860.0
1126	Առողջապահության ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ	7,665,014.3	6,060,141.0	4,118,398.0	4,172,156.6
1142	Դատաբժշկական և ախտաբանաանատոմիական ծառայություններ	571,840.2	638,840.2	626,317.5	679,099.0
1188	Դեղապահովում	4,629,995.8	6,269,751.1	6,247,338.1	5,411,925.4
1191	Խորհրդատվական, մասնագիտական աջակցություն և հետազոտություններ	382,426.3	382,426.3	366,010.4	364,304.8
1200	Մոր և մանկան առողջության պահպանում	23,016,999.2	23,075,984.6	23,075,369.5	22,796,406.9
1201	Շտապ բժշկական օգնություն	5,311,043.3	5,611,043.3	5,608,203.6	5,627,857.4
1202	Ոչ վարակիչ հիվանդությունների բժշկական օգնության ապահովում	21,720,441.8	24,431,842.5	24,426,140.9	24,391,692.6
1207	Սոցիալապես անապահով և առանձին խմբերի անձանց բժշկական օգնություն	38,648,178.1	43,106,534.4	43,106,491.9	42,597,636.0
1208	Վարակիչ հիվանդությունների կանխարգելման ծրագիր	2,340,550.2	3,060,883.8	3,028,797.2	3,036,909.3

⁸ Դրամարկղային ծախսի ցուցանիշում ներառված է նաև «Առողջապահության համակարգի արդիականացման և արդյունավետության բարձրացման ծրագրի» (1053) շրջանակում վարկային (87,649.4 հազ. դրամ) և դրամաշնորհային (1,884,420.9 հազ. դրամ) միջոցներից կատարված ծախսերը:

5. ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.1 Կազմակերպությունների կողմից ներկայացված և հաշվետու ժամանակահատվածի բյուջեի կատարման հաշվետվություններում արտացոլված ցուցանիշներ

Առկա է անհամապատասխանություն «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարի 13.03.2019թ. № 254-Ն հրամանով հաստատված «Հիմնարկի կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին» /ձև Հ-2/ և «Հիմնարկի դեբիտորական, կրեդիտորական պարտքերի և պահեստավորված միջոցների մասին» /ձև Հ-4/ հաշվետվություններում փաստացի ծախսերի և կրեդիտորական պարտքերի արտացոլման պահանջների նկատմամբ:

Համաձայն «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «....գործառնությունները, այլ դեպքերը և իրադարձությունները ճանաչվում են, երբ դրանք տեղի են ունենում և ներկայացվում են այն ժամանակահատվածների ֆինանսական հաշվետվություններում, որոնց դրանք վերաբերում են»:

ՀՀ ֆինանսների նախարարի 13.03.2019թ. № 254-Ն հրամանով հաստատված «Հիմնարկի կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին» ձև Հ-2-ի լրացման պահանջների 9-րդ կետի համաձայն «Աղյուսակի «ԺԱ» սյունակում լրացվում են հաշվետու ժամանակահատվածում հիմնարկի՝ համապատասխան փաստաթղթերով ձևակերպված իրական ծախսերը, ներառյալ կրեդիտորների չվճարված հաշիվները, հաշվարկված աշխատավարձի ու կրթաթոշակների գծով կատարված ծախսերը»:

Հաշվեքննությամբ պարզվել է՝

5.1.1 «Երեխաների բժշկական օգնության ծառայություններ» (1200-11003) միջոցառման հաշվետու ժամանակաշրջանի ճշտված պլանը կազմել է 13,418,936.50 հազ.դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը՝ 13,418,625.74 հազ.դրամ, փաստացի ծախսը՝ 13,162,133.94 հազ.դրամ:

Բյուջեի կատարման հաշվետվության կազմման համար հիմք հանդիսացող էլեկտրոնային առողջապահության «Արմեդ» համակարգում ներառված բժշկական կազմակերպությունների կատարողականների հանրագումարների արդյունքում ձևավորված փաստացի ծախսը կազմել է 13,230,735.9 հազ.դրամ, կամ Նախարարության «Հիմնարկի կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին» /ձև Հ-2/ հաշվետվությամբ արտացոլված 13,162,133.94 հազ.դրամից 68,602.02 հազ. դրամով ավելի, որը հանգեցրել է վերոնշյալ հաշվետվության փաստացի ծախսի ցուցանիշի նույն չափով խեղաթյուրման:

Նշված 68,602.02 հազ. դրամը որպես կրեդիտորական պարտք չի ձևակերպել և Նախարարության 2024 թվականի «Հիմնարկի դեբիտորական, կրեդիտորական

պարտքերի և պահեստավորված միջոցների մասին» /ձև Հ-4/ հաշվետվության տարեվերջի դրությամբ՝ 301,976.8 հազ. դրամ կրեդիտորական պարտքերի ցուցանիշում չի արտացոլվել: Արդյունքում, 68,602.02 հազ. դրամի չափով խեղաթյուրված է նաև նշված հաշվետվության տարեվերջի կրեդիտորական պարտքերի ցուցանիշը:

Նախարարության առարկություններն ու պարզաբանումները՝ «(...) Արձանագրված 68,602.2 հազար դրամ գումարի շեղումը պայմանավորված է կառավարության 2004 թվականի մարտի 4-ի 318-Ն որոշման 2-րդ հավելվածի 2-րդ կետի 6-րդ ենթակետի սահմանմամբ՝ մատուցված ծառայությունների դիմաց ֆինանսավորումն իրականացվում է կատարված աշխատանքների ծավալին համապատասխան, սակայն ոչ ավելի քան «Առողջապահություն» բաժնի տվյալ ծրագրի համար ՀՀ պետական բյուջեով սահմանված տարեկան գումարը»:

Հաշվեքննողի մեկնաբանությունը՝ Նախարարության պարզաբանումը ՀՀ պետական բյուջեով սահմանված միջոցների հաշվին և դրա սահմաններում իրականացվող ֆինանսավորման մասին է, իսկ հաշվեքննությամբ արձանագրվածը վերաբերվում է բյուջեի կատարման հաշվետվություններում փաստացի ծախսերի և տարեվերջի կրեդիտորական պարտքերի ներկայացման (բացահայտման) համար այդ հաշվետվությունների պատրաստման կիրառելի հիմունքներով սահմանված պահանջների չպահպանմանը:

5.1.2 «Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայություններ» (1207-11001) միջոցառման հաշվետու ժամանակաշրջանի ճշտված պլանը կազմել է 31,564,676.5 հազ.դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը՝ 31,564,660.43 հազ.դրամ, փաստացի ծախսը՝ 31,078,492.43 հազ.դրամ:

Բյուջեի կատարման հաշվետվության կազմման համար հիմք հանդիսացող էլեկտրոնային առողջապահության «Արմեդ» համակարգում ներառված բժշկական կազմակերպությունների կատարողականների հանրագումարների արդյունքում ձևավորված փաստացի ծախսը կազմել է 31,572,299.7 հազ.դրամ, կամ Նախարարության «Հիմնարկի կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին» /ձև Հ-2/ հաշվետվությամբ արտացոլված 31,078,492.43 հազ. դրամից 493,807.3 հազ. դրամով ավելի, որը հանգեցրել է վերոնշյալ հաշվետվության փաստացի ծախսի ցուցանիշի նույն չափով խեղաթյուրման:

Նշված 493,807.3 հազ. դրամը որպես կրեդիտորական պարտք չի ձևակերպել և Նախարարության 2024 թվականի «Հիմնարկի դեբիտորական, կրեդիտորական պարտքերի և պահեստավորված միջոցների մասին» /ձև Հ-4/ հաշվետվության տարեվերջի դրությամբ՝ 870,713.9 հազ. դրամ կրեդիտորական պարտքերի ցուցանիշում չի արտացոլվել: Արդյունքում, 493,807.3 հազ. դրամի չափով խեղաթյուրված է նաև նշված հաշվետվության տարեվերջի կրեդիտորական պարտքերի ցուցանիշը:

Նախարարության առարկություններն ու պարզաբանումները՝ «(...) Կրեդիտորական պարտքերում արձանագրված շեղումը պայմանավորված է կառավարության 2004 թվականի մարտի 4-ի 318-Ն որոշման 2-րդ հավելվածի 2-րդ կետի 6-րդ ենթակետի սահմանմամբ՝ մատուցված ծառայությունների դիմաց ֆինանսավորումն իրականացվում է կատարված աշխատանքների ծավալին համապատասխան, սակայն ոչ ավելի քան «Առողջապահություն» բաժնի տվյալ ծրագրի համար ՀՀ պետական բյուջեով սահմանված տարեկան գումարը»:

Հաշվեքննողի մեկնաբանությունը՝ Ինչպես վերը նշվեց, Նախարարության պարզաբանումը ՀՀ պետական բյուջեով սահմանված միջոցների հաշվին և դրա սահմաններում իրականացվող ֆինանսավորման մասին է, իսկ հաշվեքննությամբ արձանագրվածը վերաբերվում է բյուջեի կատարման հաշվետվություններում փաստացի ծախսերի և տարեվերջի կրեդիտորական պարտքերի ներկայացման (բացահայտման) համար այդ հաշվետվությունների պատրաստման կիրառելի հիմունքներով սահմանված պահանջների չպահպանմանը:

5.2 Նախարարության կողմից իրականացված գնումներ

Հաշվետու տարում ոչ ռեզիդենտ կազմակերպության հետ (այսուհետ՝ Վաճառող) պետության կարիքների համար կնքվել են ապրանքների մատակարարման աղյուսակ 2-ում ներկայացված պայմանագրերը:

Աղյուսակ 2

Ընթացակարգի Ծածկագիրը	Գնման ձև	Գնման առարկա	Քանակ	Ընդհանուր գին / ԱՄՆ դոլար	
				Գինը ԱԱՀ-ով	որից՝ ԱԱՀ
ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/14	ԷԱՃ	տրաստուգումաբ	2322	1,161,000.00 ⁹	193,492.26
ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/2/1-1-2024	ԷԱՃ	Էրիտրոպոէտին բետտա	97000	729,828.00	121,638.00
ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/9-3	ԷԱՃ	օկրելիզումաբ 30մգ/մլ	480	609,336.00	101,556.00
ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/29-1	ԷԱՃ	տոնցիլիզումաբ	480	83,865.60	13,977.6
Ընդամենը՝				2,584,029.6	430,663.86

5.2.1 Առկա է անհամապատասխանություն Նախարարության և Վաճառող ընկերության միջև կնքված 4 պայմանագրերի 1.1-րդ, 2.2.1-րդ և 2.2.3-րդ կետերով սահմանված պահանջների նկատմամբ:

Պայմանագրերի՝

- 1.1-րդ կետի համաձայն «... Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական

⁹ ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/14 ծածկագրով Վաճառողի հետ 02.02.2024թ. առանց ֆինանսական միջոցների առկայության պարագայում 2024-2026 թվականների ընթացքում «Տրաստուգումաբ» դեղամիջոցի մատակարարման համար կնքվել է պայմանագիր՝ 4,933,000.00 ԱՄՆ դոլարի չափով:

բնութագրով նախատեսված և տվյալ ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրությամբ՝ նույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող գնահատված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար...»,

- Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցերի համաձայն մատակարարման հասցեն սահմանված է ք. Երևան, Տիտոգրադյան 14/10:
- 2.2.1 կետի համաձայն՝ «Գնորդը պարտավոր է կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները»,
- 2.2.3-րդ կետի համաձայն «Գնորդը պարտավոր է ... Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները ...»:

Կնքված պայմանագրերի «ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ» բաժնի 3.1-րդ կետի համաձայն «... Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը: Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը»:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ

- Նախարարությունը, հաշվի առնելով Վաճառողի ոչ ռեզիդենտ կազմակերպություն հանդիսանալու հանգամանքը, պայմանագրերին կից համաձայնագրի վճարման ժամանակացույցերում կատարել է փոփոխություն ապրանքի դիմաց վճարումները բաժանելով երկու մասի՝ վաճառողին և ՀՀ պետական բյուջե ԱԱՀ վճարման ենթակա գումարների:
- Գնման առարկաները (ապրանքի ծածկագիր՝ 3002....) ներառված են «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնց ներմուծումն ազատված է ավելացված արժեքի հարկից» 29.06.2001թ. № ՀՕ-195 ՀՀ օրենքով սահմանված ավելացված արժեքի հարկից ազատված ապրանքների ցանկում:
- Վաճառողը պայմանագրով նախատեսված ապրանքները մատակարարել է ոչ թե ք. Երևան, Տիտոգրադյան 14/10 հասցեով, այլ մինչև ՀՀ մաքսային սահման:
- Վերոնշյալով պայմանավորված սահմանին վճարման ենթակա մաքսատուրքը, մաքսավճարը վճարվել են Նախարարության կողմից:
- Վաճառողին վճարվել է պայմանագրերով սահմանված գինը՝ առանց Նախարարության կողմից մաքսատուրքի և մաքսավճարի գումարները

նվազեցնելու, այն դեպքում, երբ պայմանագրերի 3.1-րդ կետի համաձայն պայմանագրի գինը ներառել է Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը:

Արդյունքում՝ 4 պայմանագրերով մատակարարված ապրանքների (դեղամիջոցների) համար Նախարարության կողմից պայմանագրերի վճարման ժամանակացույցերով Վաճառողին վճարման ենթակա բոլոր հարկերը, տուրքերը (բացառությամբ՝ ԱԱՀ-ի) ներառող գումարից ավելի է վճարվել 26,792,873.0 դրամ (Աղյուսակ 3):

Աղյուսակ 3

Գնման առարկա	Մաքսատուրք	Մաքսավճար	Ընդամենը
Տրաստուգումաբ	11,262,462.0	9,900.0	11,272,362.0
Ակտեմբա	3,364,110.0	4,500.0	3,368,610.0
Օկրևուս	4,878,170.0	9,000.0	4,887,170.0
Ռեկորմոն	5,225,779.0	2,038,952	7,264,731.0
Ընդհանուր			26,792,873.0

Նախարարության առարկություններն ու պարզաբանումները՝ «(...) Ինչ վերաբերվում է 26,7 մլն դրամով գնից ավել ձեռք բերելուն ձևակերպմանը՝ անընդունելի, քանի որ նշված գումարը չի ավելացել դեղերի գների վրա, այլ դրանք վճարվել են հենց Կազմակերպության կողմից ներկայացված գնի շրջանակներում, մասնավորապես առանձնացված ՀՀ պետական բյուջե վճարվելիք գումարների հաշվին: «(...) 26,7 մլն դրամը չի ավելացվել դեղերի գների վրա, մաքսատուրքը և մաքսավճարները չեն վճարվել ՀՀ պետական բյուջեից, այլ վճարվել են Կազմակերպության կողմից ներկայացված գնային առաջարկի շրջանակներում (քանի որ նշված ծախսերը ներառվում են դեղի արժեքի մեջ), ավելին՝ առանձնացված ՀՀ պետական բյուջե վճարվելիք գումարների հաշվին: Հետևաբար, առաջարկվում է համապատասխան պարբերությունները խմբագրել:»:

Հաշվեքննողի մեկնաբանությունը՝ Գնման 4 պայմանագրերի «ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ» բաժնի 3.1-րդ կետի համաձայն «... Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը...»: Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ Վաճառողին վճարված գումարը չի նվազեցվել Նախարարության կողմից մաքսային սահմանին մաքսատուրքերի և մաքսավճարների համար վճարված 26,792,9 հազ. դրամի չափով, հետևաբար մաքսատուրքերի և մաքսավճարների մասով կատարվել է կրկնակի վճարում:

5.2.2 Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի № 168-Ն որոշումն ուժը կորցրած

Ճանաչելու մասին» № 526-Ն որոշման 110-րդ կետով սահմանված պահանջի նկատմամբ:

Նշված որոշման 110-րդ կետի համաձայն՝ «... Էլեկտրոնային եղանակով իրականացվող գնումների դեպքում պայմանագրի կատարման արդյունքի ընդունման հետ կապված գործողություններն իրականացվում են էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով»:

Վաճառողի հետ կնքված 4 պայմանագրերի 5-րդ բաժնի (Ապրանքի հանձնումը և ընդունումը) 5.1-րդ կետի համաձայն՝ «... Մինչև պայմանագրով Ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների «armeps» համակարգի միջոցով նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում, Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն պունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին: 5.2-րդ կետով՝ Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների «armeps» համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը»:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ պայմանագրերով մատակարարված դեղորայքների հանձնման-ընդունման արձանագրությունները, դրանց կազմման հիմք հանդիսացող դրական եզրակացությունները չեն ներբեռնվել «armeps» համակարգ, այլ ներկայացվել են թղթային տարբերակով, որի հետևանքով այդ համակարգի «պայմանագրեր» բաժնում բացակայում են հանձնման-ընդունման արձանագրությունները, ինչպես նաև մատակարարված ապրանքների վճարման համար հիմք հանդիսացող հաշիվ-ապրանքագրերը:

Հաշվեքննությամբ պարզվել է նաև, որ 4 պայմանագրի (Աղյուսակ 2) կատարման արդյունքի հանձնման-ընդունման արձանագրությունները հրապարակված չեն էլեկտրոնային գնումների համակարգում:

Նախարարության առարկություններն ու պարզաբանումները՝ «... Հաշվի առնելով Կազմակերպությունը ոչ ռեզիդենտ է վերջինիս կողմից այն չի մուտքագրվել, սակայն այսուհետ Առողջապահության նախարարությունը հետևողական կլինի և պահանջվող տեղեկատվությունը գնումների համակարգ կմուտքագրվի»:

5.2.3 Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ

կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի № 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» № 526-Ն որոշման 32-րդ կետի 13-րդ ենթակետով սահմանված պահանջների նկատմամբ:

Համաձայն վերը նշված որոշման 32-րդ կետի 13-րդ ենթակետի՝ «ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և այն ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում...»

Աղյուսակ 2-ում ներառված պայմանագրերի նախագծերը պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում չեն հաշվառվել:

Նախարարության առարկություններն ու պարզաբանումները՝ «(...) Այստեղ ևս հաշվի չի առնվել ոչ ռեզիդենտ կազմակերպության կարգավիճակը: Մասնավորապես, Կազմակերպությունը իր կողմից ստորագրված պայմանագիրը ուղարկում է FedEX փոստով, ոչ գրավոր և առանց կից գրության:

Բացի այդ, համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Օրենքի 31-րդ հոդվածի մուտքագրվող փաստաթղթերը պետք է ուղեկցվեն նախարարությանը ուղղված գրությամբ, որի բացակայության պարագայում փոստով ստացված պայմանագիրը հնարավոր չէր մուտք անել Mulberry համակարգ: Մակայն, Առողջապահության նախարարությունը Կազմակերպության հետ կքննարկի պայմանագրերը և համաձայնագրերը՝ ուղեկցող գրությամբ ներկայացնելու տարբերակը»:

Հաշվեքննողի մեկնաբանությունը՝ Գնումների ոլորտը կարգավորող օրենսդրությամբ կազմակերպությունների ռեզիդենտի կամ ոչ ռեզիդենտի կարգավիճակով պայմանավորված որևէ արտոնություն կամ սահմանափակում սահմանված չէ:

6. ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄԸ

«Դեղորայքի տրամադրում ամբուլատոր-պոլիկլինիկական, հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց» (1188-12001) միջոցառում

Ընթացիկ եզրակացության «Անհամապատասխանություններ» բաժնի 5.2.1-րդ արձանագրված անհամապատասխանությունը հանգեցրել է «Հիմնարկի կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին» Հ-2 հաշվետվությունում դրամարկղային ծախսի ցուցանիշների խեղաթյուրման ոչ էական 26,792,9 հազ. դրամի չափով:

7. ՀԵՏՀՄԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման հաշվեքննության շրջանակում ուսումնասիրվել է նաև նախորդ՝ 2024 թվականի պետական բյուջեի երեք, վեց և ինն ամիսների կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացությամբ արձանագրված անհամապատասխանությունների վերացման, առաջարկությունների իրականացման հետ կապված հարցերի ընթացքը, որի մանրամասն նկարագիրը ներկայացված է սույն եզրակացության 8-րդ բաժնում:

8. ՀԱՎԵԼՎԱԾ ԵՎ ԱՅԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հաշվեքննության առարկայի գծով 2024 թվականի պետական բյուջեի երեք, վեց և ինն ամիսների կատարման հաշվեքննությունների արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացություններում Հաշվեքննիչ պալատի կողմից արձանագրված անհամապատասխանությունների վերացման վերաբերյալ

№	Հաշվեքննիչ պալատի կողմից արձանագրված անհամապատասխանություն / խեղաթյուրում	Նախարարության դիրքորոշումը		Ծանոթագրություն (ՀՊ մեկնաբանությունը)
		վերացված է/ վերացված չէ/ ընթացքում է	Պարզաբանում / Բացատրություն	
1	Նախարարության կողմից չի պահպանվել «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջը, համաձայն որի «Կազմակերպությունները պարտավոր են հաշվապահական հաշվառումը վարել հաշվապահական հաշվառման ոլորտը կարգավորող օրենսդրության պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառում վարելու հնարավորություն ընձեռող համակարգչային ծրագրերով:	ԸՆԹԱՑՔՈՒՄ Է	«Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքով նախատեսված համակարգին անցման վերաբերյալ կետի մասով հայտնում եմ, որ Առողջապահության նախարարության ֆինանսատնտեսագիտական վարչության հաշվապահական հաշվառման բաժինը 2024 թվականի հունվարի 1-ից հաշվապահական հաշվառումն ամբողջությամբ իրականացնում է հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտին համապատասխան, բացառությամբ հիմնական միջոցների: Հաշվի առնելով նախարարության առանձնահատկությունները՝ անցումային շրջանը բավականին աշխատատար ու ժամանակատար էր, քանի որ ամբողջ տարվա ընթացքում կատարվել է կենտրոնական ապարատի, կենտրոնացված կարգով դեղորայքի ձեռքբերման, պատվաստանյութերի ձեռքբերման, առողջապահական կազմակերպությունների վերազինման, հանրային առողջության պահպանման ծրագրերի համապատասխանեցում նոր ծրագրին, ինչն էլ հանդիսացել է պատճառ, որ հիմնական միջոցների վարումը ժամանակի սղության պատճառով դեռ չի իրականացվում հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտին համապատասխան: Միաժամանակ	ՎԵՐԱՑՎԱԾ ՉԷ

			տեղեկացնում եմ, որ ներկայումս ինտենսիվ կատարվում է հիմնական միջոցների հաշվառումը նոր հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ծրագրում: Գործընթացը նախատեսվում է ավարտել 10 աշխատանքային օրվա ընթացքում:	
2	Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն որոշմամբ հաստատված գների և նորմատիվների հաստատման կարգի և ԱՆ նախարարի կողմից հրամանով հաստատված գների միջև, այսինքն, ՀՀ առողջապահության նախարարությունում պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների գնագոյացման գործառույթը չի իրականացվում սահմանված կարգով:	ՎԵՐԱՅՎԱԾ ՉԷ	«...Ներկայումս առողջության համապարփակ ապահովագրության ներդրման աշխատանքների շրջանակներում իրականացվում են ապահովագրական ծառայությունների ծավալների և դրանց գնագոյացման, ծախսերի ակտուարական հաշվարկների և ծավալների գնահատման համար տվյալների հավաքագրում...»	ՎԵՐԱՅՎԱԾ ՉԷ
3	Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2011 թվականի հուլիսի 28-ի «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական հաշվետվության օրինակելի ձևը հաստատելու մասին» № 1058-Ն որոշման 2-րդ կետի պահանջների մասով, ըստ որի կազմակերպությունների տարեկան հաշվետվություններն Նախարարության կողմից ամփոփվում և տեղադրվում են Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պաշտոնական կայքէջում մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա մարտի 31-ը:	ԸՆԹԱՑՔՈՒՄ Է	ՀՀ կառավարության 2011 թվականի հուլիսի 28-ի 1058-Ն որոշման կատարման մասով իրականացվում են ԱՐՄԵԴ համակարգի հետ համադրման աշխատանքներ, որի արդյունքում հնարավոր կլինի հաշվետվություններ գեներացնել մեկ փաստաթղթում: Միաժամանակ հայտնում եմ, որ նախատեսվում է փոփոխել 1058-Ն որոշումը, այլ կարգավորումներ սահմանելու նպատակով:	ՎԵՐԱՅՎԱԾ ՉԷ

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ առողջապահության նախարարությանը միջոցներ ձեռնարկել՝

- Բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման պայմանագրային գների հիմնավորվածությունն ապահովող գնագոյացման մեթոդաբանությունը հաստատելու ուղղությամբ:
- Էլեկտրոնային առողջապահության «ԱՐՄԵԴ» համակարգում առկա տվյալների (ծառայությունների քառանիշ, յոթանիշ ծածկագրերի շտեմարան) ինքնաշխատ եղանակով պետական գանձապետական էլեկտրոնային վճարումների, գանձապետական հաշվետվությունների համակարգերի, Նախարարությունում ներդրված հաշվապահական հաշվառում վարելու համակարգչային ծրագրերի հետ փոխգործելիությունը (համակցելիությունը) ապահովելու ուղղությամբ:
- Նախարարության հաշվապահական հաշվառումը ՀՀ ֆինանսների նախարարի համապատասխան հրամաններով հաստատված Ստանդարտի պահանջներին համապատասխան վարելու, ինչպես նաև հաշվային պլանի համապատասխան հաշիվներում գրանցումները՝ այդ ստանդարտների սահմանումներին, չափանիշներին և հաշվային պլանի կիրառման հրահանգի ցուցումներին համապատասխան կատարելու ուղղությամբ:
- Էլեկտրոնային եղանակով իրականացվող գնումների դեպքում պայմանագրի կատարման արդյունքի ընդունման հետ կապված գործողություններն էլեկտրոնային գնումների «armeps» համակարգի միջոցով իրականացնելու ուղղությամբ:
- Դեղորայքի գնման 4 պայմանագրով մատակարարված ապրանքները (դեղամիջոցները) օրենսդրությամբ սահմանված կարգով մաքսագերծելու համար Նախարարության կողմից վճարված 26,792,9 հազ. դրամը Վաճառողից հետ գանձելու (առաջիկա վճարումներից հաշվանցելու) ուղղությամբ:

Ընթացիկ եզրակացությունում ներկայացված վերոնշյալ առաջարկությունների հիման վրա մշակել և հաստատել միջոցառումների ծրագիր, որը կպարունակի յուրաքանչյուր միջոցառման համար պատասխանատու ստորաբաժանում(ներ)ը և միջոցառման կատարման ժամանակացույցը:

Գագիկ Բարսեղյան

Հաշվեքննիչ պալատի անդամ

«29» ապրիլ, 2025 թվական

ՀՀ հաշվեքննիչ պալատ,

Մ.Բաղրամյան 19, Երևան

Հայաստանի Հանրապետություն